Եվրասիա միջազգային համալսարանի 2010-2015 թթ ռազմավարական ծրագրի շրջանակներում 2013-2014թթ. ուսումնական տարվա ընթացքում ռազմավարական նպատակների իրագործման ուղղությամբ իրականացված աշխատանքների վրաբերյալ ռեկտորի համառոտ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Ընդունելություն և սովորողների համակազմի քանակ

2010-2015թթ. Ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակներն իրականացնելու համար Եվրասիա միջազգային համալսարանի հասարակայնության հետ կապերի և նախագծերի կենտրոնները համատեղ իրականացրել են բազմաթիվ ծրագրեր, որոնք նպատակ են հետապնդել մեծացնելու համալսարան ընդունվող դիմորդների և վարժարան ընդունվող աշակերտների թիվը: Իրականացվել են պրեզենտացիաներ բազմաթիվ դպրոցներում, քոլեջներում, հեռուստատեսությամբ և ռադիոյով սփռվել են բազմաթիվ հայտարարություններ կամ ներկայացվել են համալսարանի կյանքին առնչվող բազմաթիվ իրադարձություններ, կանոնավոր կարգով իրականացվել են բանավեճի ակումբի և «Քայլ առաջ» ծրագրով նախատեսված մրցույթներն ու թրեյնինգները: Շատ արդյունավետ են անցել 30-ից ավել դպրոցներում անկացված փափուկ հմտությունների զարգացման վերաբերյալ սեմինարները, որոնց նկատմամբ դպրոցների և՛ տնօրենները, և՛ աշակերտները ցուցաբերել են մեծ հետաքրքրվածություն:

Այնուամենայնիվ հանրակրթական բարեփոխումներով և ժողովրդագրական հայտնի փոփոխություններով պայմանավորված լուրջ դժվարություններ են ծագել ընդունելության գործընթացներում: Դրանց նպաստել են նաև կառավարության կողմից իրականում անհավասար մրցակցային պայմաններ ունեցող պետական և ոչ պետական բուհերի նկատմամբ տարվող միատիպ քաղաքականությունը, ոչ պետական բուհերին «մեկ արշինով» չափելու սխալ մոտեցումը, ոչ պետական բուհերի նկատմամբ կառավարության թերհավատ դրսևորումները և հատկապես կրթական շուկայում միջազգային նոր բուհերի հիմնադրումը:

Այնուամենայնիվ 2010 թվականին աշակերտների թիվը 60-ից 2012 թվականին հասել է 111-ի, իսկ 2013 թվականին դարձյալ վերը նշված պատճառներով նվազել է մինչև 96:

Այդ նույն պատճառահետևանքային օրինաչափությունն է նկատվում նաև համալսարանի առումով: 2010 թվականին ուսանողության թիվը հավատարմագրված երեք մասնագիտությունների կրթական բոլոր ծրագրերում ընդգրկվածների հաշվով կազմել է 709 ուսանող, 2013 թվականին նվազել է մինչև 533: Վերլուծությունները ցույց են տալիս, որ այս թիվը կայունացման միտում ունի և 2014 թվականին մեծ տարբերություն չի նկատվել: Չնայաք կենտրոնացված քննական համակարգով ընդունվածների թիվը դեռևս չնչին է, սակայն Եվրասիա հենակետային վարժարանից և քոլեջներից հեռակա 2-րդ կուրս, իսկ այնուհետև առկա ուսուցման համակարգի տեղափոխման որոշակի ավելացում է կատարվում, որի շնորհիվ առաջիկայում ուսանողների թիվը կարող է նորից հատել 700-ի սահմանը, իսկ հավատարմագրման դեպքում ներկայիս համակազմը կարող է ավելանալ առնվազն 1.5-2 անգամ(համալսարանի վերանորոգման աշխատանքներն ավարտելուց հետո մեկ հերթ ուսուցման դեպքում ուսանողների նորմատիվային թիվը կարելի է հասցնել ավելի քան 3000-ի):

Նշված ժամանակահատվածում համալսարանի համախառն հասույթը 140 մլն-ից նվազել է մինչև 110 մլն ՀՀ դրամ:

Նպատակ 2. Կատարելագործել որակի ապահովման նպատակով ներդրված համակարգը

Որակի ապահովման նոր համակարգեր ներդնելու նպատակով Եվրասիա միջազգային համալսարանը 2013թ. դեկտեմբերից իրականացնում է «Որակի ապահովման համակարգի կատարելագործում» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում իրականացնում է համալսարանի ինստիտուցիոնալ և «Իրավագիտություն» մասնագիտության մասնագիտական կրթական ծրագրի ինքնավերլուծություն: Դրամաշնորհի շրջանակներում վերամշակվում են ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի, կրթական ծրագրերի, նյութատեխնիկական բազայի, կառավարման համակարգի որակի գնահատման չափանիշները և մեխանիզմները, պատրաստվում է որակի ապահովման ձեռնարկը: Ինքնավերլուծության ընթացքում գնահատվում է մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին և որակավորումների ազգային շրջանակին՝ վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի հետագա զարգացման համար:

Համալսարանի հնարավոր գործընթացների ավտոմատացման նպատակով մշակվել և գործադրվել է Student M տեղեկատվական ներքին համակարգը, որը հնարավորություն է ընձեռում մուտքագրել և կենտրոնացնել ուսանողների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, ավտոմատ ստանալ հաշվետվություններ: Համակարգից օգտվելու հնարավորություն ունեն ոչ միայն բուհի աշխատակիցները, այլ նաև ուսանողները, շրջանավարտները և դասախոսները: Տեղեկատվական համակարգի միջոցով

ուսանողները հնարավորություն ունեն տեսնել և խմբագրել անձնական տեղեկատվությունը, կազմել անհատական ուսումնական պլան, տեսնել և ներբեռնել դասատախտակը, հետևել գնահատականներին, ծանոթանալ ընթացիկ առաջադիմությանը, ՄՈԳ-ին, ստանալ և մուտքագրել տեղեկատվություն պրակտիկայի, ավարտական աշխատանքի, պետական քննությունների վերաբերյալ, մուտքագրել, խմբագրել կարիերայի վերաբերյալ տեղեկատվություն, ձևավորել և ներբեռնել ինքնակենսագրությունը, ավտոմատ ներբեռնել ակադեմիական տեղեկանքը և այլն: Բուհի աշխատակիցները մուտքագում են ուսանողների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում ներբեռնում վերլուծություններ և հաշվետվություններ: Համակարգում այժմ մուտքագրված է ուսանողների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, ինչպես նաև ուսումնական պլանները, գնահատականները և այլն:

Բուհում փաստաթղթաշրջանառությունը պակասեցնելու համար շահառուների շրջանում իրականացվող հարցումները 2013թ-ից իրականացվում են հիմնականում էլէկտրոնային տարբերակով, ինչը կտրուկ նվազեցրել է թղթատարությունը, բարձրացրել գործընթացի արդյունավետությունը, նվազեցրել գործընթացի վրա ծախսվող ժամանակը: (2013 թ ընթացքում հարցումների մասնակցել է 89 ուսանող): Նույն այդ նպատակով առարկաների միջանկյալ և ավարտական ստուգումների համար 2013 թ. գարնանը փորձարկվել և սեպտեմբերից բոլոր ֆակուլտետներում ներդրվել է iTest ծրագիրը: Ներկայումս քննություններն իրականացվում են բանավոր, գրավոր, էլեկտրոնային (iTest) կան համակցված (էլեկտրոնային (iTest) և գրավոր): Ծրագիրը նաև հնարավորություն է տվել բարձրացնելու գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը, արագությունը և արդյունավետությունը:

Նպատակ 2. Կրթական առաջընթացին միտված ծրագրերի, նախագծերի իրականացում.

Եվրասիա միջազգային համալսարանը մինչև 2013թ. տրամադրում էր կրթական հնարավորություններ ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի VI՝բակալավր, VII՝մագիստրոս մակարդակներում՝«Իրավագիտություն», «Կառավարում», «Օտար լեզու և գրականություն», «Ֆինանսներ» մասնագիտություններով:
2013թ. լիցենզավորվել են բակալավրիական և մագիստրոսական երեք կրթական ծրագրեր. Լրագրություն, Մանկավարժություն և հոգեբնանություն, Կառավարման տեղեկատվական համակարգեր: 2013թ-ից գործում է նաև ասպիրանտուրա “Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում”, “Գերմանական լեզուներ” և “Հանրային իրավունք /սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում/” մասնագիտությունների գծով:
Եվրասիա միջազգային համալսարանում 2011թ., Լիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարանի հետ համատեղ, մեկնարկեց "Էլեկտրոնային բիզնեսի կառավարում" կրկնակի դիպլոմի մագիստրոսական ծրագիրը "ՄԱՅՔՐՈՍՈՖԹ" ընկերության հայաստանյան

ներկայացուցչության և Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (UITE) աջակցությամբ: Սակայն ծրագիրը կասեցվել էր նյութատեխնիկական բազայի հարստացման, հիմնական դասախոսական կազմի հավաքագրման նպատակով: Այս աշխատանքներն իրականացնելու և ծրագիրը վերսկսելու նպատակով Համալսարանը ՀՀ Կառավարման Ակադեմիայի հետ համատեղ 2013թ. դիմել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամին և ստացված դրամաշնորհային ծրագրի միջոցներով վերանայել է մասնագիտության բոլոր առարկայական ծրագրերը, Moodle համակարգ է ներբեռնել համապատասխան էլեկտրոնային դասագրքեր, դասախոսություններ, նախադեպեր, PPT ձևաչափով պարտաստված նյութեր, գրադարանը հարստացվել է նոր գրքերով, ձեռք են բերվել համապատասխան սարքավորումներ: Ծրագիրը կվերսկսվի և ընդունելությունը կիրականացվի 2015թ.: Իրականացվելու են կրկնակի դիպլոմով մագիստրոսական և ասպիրանտական ծրագրեր «Էլեկտրոնային բիզնեսի կառավարում» մասնագիտությամբ:

Նպատակ 3. Կրթական միջավայրի կատարելագործում

«Որակի ապահովման համակարգի կատարելագործում», «Միջազգային կրկնակի դիպլոմի ծրագրեր "Էլեկտրոնային հանրային կառավարում» և«Էլեկտրոնային բիզնեսի կառավարում» մասնագիտություններով» և «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ և բարենորոգումներ Համալսարանի գրադարանում, ընթերցասրահը վերանորոգվել և ապահովվել է նոր կահույքով ու համակարգիչներով, ձեռք է բերվել համալսարանում գործող ամբիոններին անհրաժեշտ մասնագիտական գրականություն, սկսվել է գրադարանի ավտոմատացման գործընթացը, շարունակաբար ընդլայնվում է գրադարանի մատուցած ծառայությունների շարքը: Գրադարանային ֆոնդը համալրվում է նաև պահանջվող գրականության էլեկտրոնային տարբերակներով: Ուսումնական բոլոր նյութերը թվայնացվում և տեղադրվում են բուհի MOODLE վիրտուալ լսարանում: 2013 թ.-ի դեկտեմբերից գրադարանում գործում է Միավորված Ազգերի Կազմակերպության նյութերի տեղեկատվական անկյուն:

Շարունակվում է Համալսարանի տեխնիկական համալրումը, ստեղծվել է նոր համակարգչային լսարան:

2013թ. ԵՄՀ-ում առաջին անգամ ընտրվեց Ուսանողների պաշտպան, որն անկախ մարմին է և կոչված է պաշտպանել ուսանողների շահերը:

Նպատակ 4. Հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացում

Հետազոտական աշխատանքների զարգացման նպատակով 2011թ-ից Համալսարանում գործում է Հետազոտության և զարգացման կենտրոնը, որի նպատակն է խթանել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետազոտական հմտությունների զարգացմանն ու հետազոտական աշխատանքների իրականացմանը միտված աշխատանքները, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների արդյունքերն ուղղել կրթական գործընթացի որակի բարձրացմանը: 2012-2013 թթ. իրկանացվել են երկու միջբուհական (որոնցից մեկը Հայաստանի գործատուների հանրապետական

միության հետ համատեղ), երկու ուսանողական և մեկ ամբիոնային գիտաժողովներ: Գիտաժողովներում զեկույցներով հանդես են եկել բուհերի, կրթական ու գիտական կազմակերպությունների դասախոսներ, գիտական աշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ, տնտեսության տարբեր ոլորտներում աշխատող մասնագետներ, ովքեր համադրելով իրենց տեսական և գործնական գիտելիքները՝ արժեքավոր առաջարկություններ են ներկայացրել իրենց հետաքրքրող ոլորտների զարգացման վերաբերյալ: Միջբուհական գիտաժողովների նյութերը տպագրվել են առանձին ժողովածուներով՝ ԲՈՀ-ի պահանջներին համապատասխան, որոնց էլեկտրոնային տարբերակները հասանելի են ԵՄՀ-ի կայքում:

Նպատակ 5. Միջազգային ծրագրերի իրականացում, միջազգային փորձի ներկրում, միջազգայնացում

2011թ. սկսած Համալսարանը հանդիսանում է Էրազմուս Մունդուս (Գործողություն 2) երեք ծրագրերի կոնսորցիումների անդամ՝ ALRAKIS I, ALRAKIS II և MID: Ծրագրերի շրջանակներում 2012-2013 թթ. 10 ուսանող, 17 հետազոտող, դասախոս և վարչական աշխատող մեկնեցին արտասահմանյան բուհեր սովորելու և վերապատրաստվելու, իսկ ԵՄՀ-ն եվրոպական համագործակից բուհերից ընդունել են 2 ուսանող և մեկ հետազոտող: 2014թ. աշնանը սովորելու և վերապատրաստվելու նպատակով փոխանակման ծրագրերով արտասահմանյան բուհեր կմեկնեն ևս 4 ուսանող, 1 հետազոտող, 11 դասախոս և վարչական աշխատող:

TEMPUS IV ծրագրի շրջանակներում Եվրասիա միջազգային համալսարանը 2012 թվականի հոկտեմբերից հանդիսանում է «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) ծրագրի հայաստանյան համակարգողը: Հայաստանյան համագործակից հաստատություններն են.

- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան-ՀՊՄՀ
- Գորիսի պետական համալսարան-ԳՊՀ
- Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա-ՀՀՊԿԱ
- Հույսի կամուրջ ՀԿ:

Ծրագրի շրջանակներում համագործակից բուհերի կողմից մշակվել է ներածական և խորացված 8 մոդուլներից բաղկացած ուսումնական ծրագիր: Յուրաքանչյուր բուհում փորձարկվել է 2 մոդուլ և ներառվել ուսումնական պլաններում: Վերոհիշյալ ծրագրերի մշակման նպատակով աշխատանքային խմբի անդամները վերապատրաստվել են Իռլանդիայի տեխնիկական համալսարանում և Անգլիայի Եղջ Հիլ համալսարանում:

Նոր պայմանագիր է կնքվել ԵՄՀ-ն և Ղազախստանի ամերիկյան համալսարանի միջև, որը ենթադրում է կրթական ծրագրերի որակի և արդյունավետության բարելավում, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացում, շարժունության հնարավորությունների ստեղծում, փորձի փոխանակում:

Նպատակ 6. Ոչ ֆորմալ կրթության ապահովում

Ուսանողների փափուկ հմտությունների զարգացման նպատակով Համալսարանում կազմակերպվել է Մարդու իրավունքերին նվիրված ամառային դպրոց: Նախագիծն անցկացվել է «Ապագա առաջնորդները գործում են խաղաղության համար» (FLAF) ծրագրի շրջանակներում, որը Հայաստանում կոորդինացնում էր “AIESEC” միջազգային

հասարակական կազմակերպությունը: Դպրոցի առաքելությունն էր ուսանողների մոտ զարգացնել իրավական մշակույթը միջմշակութային հաղորդակցման ժամանակ:
2013թ. ընթացքում ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի և Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համատեղ կազմակերպած «Երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում վերապատրաստված ԵՄՀ ուսանողները անցկացրել են «Մարդու թրաֆիքինգը և շահագործումը արդի աշխարհում և դրանց հասարակական մեծ վտանգավորությունը» ու «Պայքարը մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ» թեմաներով դասընթացը ոչ-ֆորմալ՝ քննարկում-բանավեճի միջոցով: Դասընթացի նպատակն էր երիտասարդության շրջանում բարձրացնել իրազեկությունը մարդկանց թրաֆիքինգի մասին և խթանել ապահով միգրացիոն վարքագիծ՝ զինելով նրանց անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով՝ թրաֆիքինգից խուսափելու և Հայաստանում դրա դեմ պայքարելու համար:
«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի ֆինանսական օժանդակությամբ ԵՄՀ-ում շարունակել է ակտիվորեն գործել «Եվրասիա» բանավեճի ակումբը: Ակումբի շրջանակներում իրականացվել են մի շարք հանդիպումներ, աշխատաժողովներ, քննարկումներ, կինոդիտումներ, դասընթացներ բանավեճի կանոնների և ձևաչափերի վերաբերյալ, ներբուհական և միջբուհական բանավեճեր, ինչպես նաև Հանրային բանավեճ Եվրասիա միջազգային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, «Եվրասիա» բանավեճի ակումբի անդամների և ուսանողների միջև:
Համալսարանական ընդհանուր մթնոլորտը բարեփոխելու՝ ուսանողներին, դասա-խոսական, վարչական կազմին առողջ ապրելակերպին ընտելացնելու համար Նախագծերի կառավարման կենտրոնի, Ուսանողական խորհրդի և «Եվրասիա» բանավեճի ակումբի նախաձեռնությամբ իրականացվել է «Հակածխախոտային ակցիան», որը ներառում էր երկու բաժին՝ ինտելեկտուալ խաղ և բանավեճ՝ «Հասարակական վայրերում ծխելն պետք է արգելվի» թեմայով:
ԵՄՀ-ում գործող դասընթացների կենտրոնի կողմից կազմակերպվել են համակարգչային և անգլերեն լեզվի դասընթացներ, ինչպես նաև լրացուցիչ TOEFL դասընթաց Էրազմուց Մունդուս մրցույթային ծրագրին համալսարանինց մասնակցել ցանկացող ուսանողների, դասախոսների և վարչական աշխատողների համար:
Համագործակցության հուշագիր է կնքվել Եվրասիա միջազգային համալսարանի և Ջերմուկ ինթերնեյշընըլ պեպսի կոլա բոթլեր ընկերության միջև՝ ըստ որի ԵՄՀ-ի ուսանողները հնարավորություն են ձեռք բերել ուսումնական և արտադրական պրակտիկան անցնել ընկերությունում, մասնակցել ուսումնական այցերի՝ արտադրության, ինչպես նաև ֆունկցիոնալ այլ ստորաբաժանումների գործընթացներին ծանոթանալու և բուհում ստացված տեսական գիտելիքները գործնական օրինակներով ամրապնդելու նպատակով:

Նպատակ 7. Ռեբրենդինգ., ինֆորմացիայի թափանցիկության ապահովում, հասարակայնության հետ կապերի զարգացում և բրենդի ամրապնդում.

Համալսարանին վերաբերող տեղեկատվական նյութերը հանրությանը հասանելի դարձնելու նպատակով վերանայվել և վերափոխվել է Համալսարանի www.eiu.am էլեկտրոնային կայքը, ակտիվացել է համալսարանի ներկայացվածությունը սոցիալական ցանցերում: Ստեղծվել է գովազդային հոլովակ ԵՄՀ կրթական ծրագրերի

վերաբերյալ, որտեղ զետեղված են նաև բուհի կողմից իրականացվող միջազգային ծրագրերը՝ինչն ուղղակի ազդեցություն ունի թիրախային խմբերի վրա:
Դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվել են հանդիպում-քնարկումներ Երևանի 8 քոլեջներում, ակտիվացել է համագործակցությունը «Եվրասիա» միջազգային վարժարանի աշակերտների հետ, որի արդյունքում ունեցել ենք 10 դիմորդ տվյալ հաստատություններից:
2013թ-ին Եվրասիա միջազգային համալսարանի Ուսանողական խորհուրդը ընտրվել է որպես ՀՈՒԱՄ (Հայաստանի ուսանողական ազգային ասոցացիա) 17-րդ լիիրավ ուսանողական ինքնակառավարվող մարմին (մասնավոր առաջին բուհի ներկայացուցչությունը ՀՈՒՍԱ-ի կազմում):

Նպատակ 8. Ռազմավարական համագործակցությունների ամրապնդում

Ուսանողների ուսումնական, նախասավարտական, գիտահետազոտական և գիտա-մանկավարժական պրակտիկան կազմակերպելու նպատակով ԵՄՀ-ն համագործացել է մի շարք պետական և ոչ-պետական հաստատությունների, հասարակական կազմա-կերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կառույցների հետ: